

«Այբ» կրթական հիմնադրամ

**Ֆինանսական հաշվետվություններ
2016թ. համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Հիմնադրամի միջոցների մնացորդում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,

«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ

Հեռախոս + 374 (10) 566 762

Ֆաքս + 374 (10) 566 762

Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Այբ» կրթական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Այբ» կրթական հիմնադրամի («Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, Հիմնադրամի միջոցների մնացորդում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս ֆինանսական գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար: Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԵՄՍՈ օրենսգրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԵՄՍՈ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Հանգամանքների լուսաբանում – Համադրելի տեղեկատվություն

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ին, որտեղ նշվում է, որ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար ներկայացված համադրելի տեղեկատվությունը վերահաշվարկվել է: Մեր եզրակացությունում չի ներկայացվում այս հարցի հետ կապված:

Համադրելի տեղեկատվությանը վերաբերող այլ հարցեր

Հիմնադրամի 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվերին ավարտված տարիների ֆինանսական հաշվետվությունների (որոնցից վերցվել է 2015թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը) աուդիտը, բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ում նկարագրված ճշգրտումների, իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2016թ. օգոստոսի 31-ի եզրակացությունում արտահայտվել է ձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, քանի որ Հիմնադրամը ծանաչել էր անավարտ հիմնական միջոցներ, որոնց նկատմամբ չունեի սեփականության իրավունք և որոնք փաստացի շահագործվում էին երրորդ կողմի կողմից:

Որպես 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի մաս՝ մենք իրականացրել ենք ծանոթագրություն 20-ում նկարագրված ճշգրտումների աուդիտը, որոնք կիրառվել են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների և 2015թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տվյալները վերահաշվարկելու համար: Մեզ չի հանձնարարվել իրականացնել 2015թ. կամ 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ֆինանսական հաշվետվությունների (որոնք այստեղ ներկայացված չեն) կամ 2015թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության աուդիտ, դիտարկում կամ կիրառել որևէ այլ ընթացակարգեր՝ բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ում նշված ճշգրտումների, այդ իսկ պատճառով, մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ում նշված ճշգրտումները տեղին են և կիրառվել են ըստ պատշաճի:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

***Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների
աուդիտի համար***

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, գերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծքի արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որոնք կարող են լուրջ կասկածներ հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական կարծիքը: Երբ եզրահանգումները հիմնված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:



«Այբ» կրթական հիմնադրամ
Անկախ աուդիտորական եզրակացություն
Էջ 4

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման պատասխանատու գործընկերն է Իրինա Գևորգյանը:


Տիգրան Գասպարյան
Տնօրեն




Իրինա Գևորգյան
Տնօրեն, Աուդիտի բաժին

KPMG Armenia

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
8 օգոստոսի 2017թ.

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2016թ.	31 դեկտեմբերի 2015թ.	1 հունվարի 2015թ.
			Վերահաշվարկված	Վերահաշվարկված
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	193,993	344,682	104,955
Ավանդներ բանկերում		123,889	121,547	-
Շնորհներ և այլ դեբիտորական պարտքեր	6	414,937	296,297	118,814
Պաշարներ	7	342,333	74,426	10,276
Ընթացիկ ակտիվներ		1,075,152	836,952	234,045
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	8	73,655	70,327	36,062
Տրամադրված փոխառություններ		-	24,735	24,735
Հետաձգված հարկային ակտիվներ	14	24,326	25,110	18,078
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		2,509	5,017	76,238
Ոչ ընթացիկ ակտիվներ		100,490	125,189	155,113
Ընդամենը ակտիվներ		1,175,642	962,141	389,158
Պարտավորություններ և Հիմնադրամի միջոցների մնացորդ				
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	9	117,226	217,850	124,480
Ընթացիկ հարկային պարտավորություններ		-	-	4,091
Կարճաժամկետ փոխառություններ		-	31,621	28,087
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	18,135	10,680	28,344
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	956,376	619,028	88,396
Ընթացիկ պարտավորություններ		1,091,737	879,179	273,398
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	59,042	65,037	78,390
Երկարաժամկետ փոխառություններ		5,240	5,239	3,892
Ոչ ընթացիկ պարտավորություններ		64,282	70,276	82,282
Ընդամենը պարտավորություններ		1,156,019	949,455	355,680
Կուտակված ավելցուկ		19,623	12,686	33,478
Հիմնադրամի միջոցների մնացորդ		19,623	12,686	33,478
Ընդամենը պարտավորություններ և Հիմնադրամի միջոցների մնացորդ		1,175,642	962,141	389,158

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 11-ից 31-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Այր» կրթական ինստիտուտ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2016թ. համար

հազ. դրամ	Ծնթգ.	2016թ.	2015թ.
			վերահաշվարկված
Եկամուտ մվիրատվություններից	12	1,313,708	1,217,813
Եկամուտ ծառայություններից		91,362	96,099
Այլ եկամուտ		10,004	2,440
		1,415,074	1,316,352
Տրամադրված մվիրատվություններ և շնորհներ		(638,453)	(619,456)
Աշխատակազմի գծով ծախսեր		(401,323)	(338,397)
Կրթական և այլ նյութեր		(238,230)	(226,295)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախս		(18,135)	(10,680)
Այլ ծախսեր	13	(119,278)	(154,423)
Գործառնական գործունեության արդյունքները		(345)	(32,899)
Ֆինանսական եկամուտ		8,548	7,312
Ֆինանսական ծախսեր		(482)	(1,603)
Զուտ ֆինանսական եկամուտ		8,066	5,709
Շահույթ/(վնաս) մախքան շահութահարկով հարկումը		7,721	(27,190)
Շահութահարկի գծով (ծախս)/հատուցում	14	(784)	6,398
Ընդամենը համապարփակ եկամուտ/(վնաս) տարվա համար		6,937	(20,792)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2017թ. հունիսի 20-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Սոնա Կոչեցյան
Գործադիր տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար



Գրիգոր Գաբրիելյան
Գլխավոր հաշվապահ

(Signature)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է
 դիտարկվի 11-ից 31-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը
 կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	92,301	95,933
Ստացված շնորհներ և նվիրատվություններ*	1,766,555	1,721,315
Տրամադրված շնորհներ և նվիրատվություններ	(721,646)	(158,603)
Կանխիկ վճարումներ մատակարարներին	(828,465)	(837,060)
Կանխիկ վճարումներ աշխատակիցներին	(406,533)	(328,268)
Հարկերի, բացառությամբ շահութահարկի, վճարումներ	(41,782)	(100,947)
Այլ կանխիկ վճարումներ	-	(2,595)
Գործառնական գործունեության համար (օգտագործված) դրամական միջոցների հոսքեր/գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ նախքան շահութահարկի վճարումը	(139,570)	389,775
Վճարված շահութահարկ	(12,200)	-
Գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր/գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր	(151,770)	389,775
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Տրված կանխավճարներ	-	(6,377)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(23,427)	(31,708)
Ավանդների տեղաբաշխում	-	(118,288)
Տրամադրված փոխառություններ	(51,000)	-
Մուտքեր տրամադրված փոխառություններից	75,415	-
Ստացված տոկոսային եկամուտ	12,517	832
Ներդրումային գործունեությանից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր/ ներդրումային գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	13,505	(155,541)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	-	2,969
Վարկերի և փոխառությունների մարում	-	(172)
Ֆինանսավորման գործունեությանից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր	-	2,797
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	(138,265)	237,031
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ	344,682	104,955
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(12,424)	2,696
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ (ծնթ. 5)	193,993	344,682

*2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում կապակցված կողմից ստացված 30,042 հազար դրամ գումարով փոխառությունը ներվել է և փոխարկվել է եկամուտներին վերաբերող շնորհի:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 11-ից 31-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	<u>Կուտակված ավելցուկ</u>
հազ. դրամ	
Մնացորդը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ	33,478
Վնաս տարվա համար	(20,792)
Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,686
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	12,686
Եկամուտ տարվա համար	6,937
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,623

1 Ներածություն

(ա) Հայաստանի գործարար միջավայրը

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Հիմնադրամի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության դեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել դեկավարության գնահատականից:

(ա) Հիմնադրամը և հիմնական գործունեությունը

«Այբ» կրթական հիմնադրամի (Հիմնադրամը) հիմնադիրներն են՝

- Աշոտ Ասլանյան
- Դավիթ Փախչանյան
- Արամ Փախչանյան
- Կարո Սարգսյան
- Կարեն Մուսայելյան
- Դավիթ Յան
- Մաթևոս Արամյան
- «Օգտագոն» ՍՊԸ

Հիմնադրամի հիմնական նպատակն է ստեղծել բարձրորակ կրթական միջավայր Հայաստանում, աջակցել Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացմանը և կատարելագործմանը, աջակցել երիտասարդներին աշխատանքային առաջխաղացման և նրանց իրավունքների պաշտպանության գործում:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Կոռյունի փ. 19 ա, 9-րդ հարկ:

2 Հաշվապահական հաշվառման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

4 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում գնահատումները վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթների կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ի (է) կետում՝ ծախսերի բաշխում:

5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Բանկային հաշիվների մնացորդներ	192,477	344,532
Կանխիկը ճանապարհին	1,516	-
Կանխիկը դրամարկդում	-	130
Ընդամենը դրամական միջոցները և դրանց համարժեքները		
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում	193,993	344,682

Հիմնադրամի ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 15-ում:

6 Շնորհներ և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Կանխավճարներ	379,395	168,051
Ընթացիկ հարկային ակտիվներ	15,551	3,351
Ստացվելիք շնորհներ	14,470	99,403
Տրամադրված փոխառություններ	5,315	4,996
Այլ դեբիտորական պարտքեր	206	20,496
	414,937	296,297

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ունի երեք պայմանագրային կողմ (2015թ-ին՝ երկու պայմանագրային կողմ), որոնց մնացորդները գերազանցում են շնորհների և այլ դեբիտորական պարտքերի ընդհանուր գումարի 10%-ը: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 332,689 հազար դրամ (2015թ-ին՝ 129,547 հազար դրամ):

Հիմնադրամի ենթարկվածությունը պարտքային և արտարժույթի ռիսկերին շնորհների և այլ ստացվելիք գումարների հետ կապված ներկայացված են ծանոթագրություն 15-ում:

7 Պաշարներ

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Շինարարական նյութեր	338,005	68,559
Վառելիք	78	484
Այլ	4,250	5,383
	342,333	74,426

8 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Համակարգիչներ և սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Տնտեսական գույք և գրականություն	Վարձակալված հիմնական միջոցների բարելավումներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Մկրթական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ., վերահաշվարկված	21,300	19,256	7,400	-	52,286	100,242
Ավելացումներ	18,833	-	9,791	13,974	2,980	45,578
Օտարումներ	(1,268)	-	(2,935)	-	-	(4,203)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ., վերահաշվարկված	38,865	19,256	14,256	13,974	55,266	141,617
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	38,865	19,256	14,256	13,974	55,266	141,617
Ավելացումներ	4,319	-	16,848	-	358	21,525
Օտարումներ	-	-	(1,366)	-	-	(1,366)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	43,184	19,256	29,738	13,974	55,624	161,776
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ., վերահաշվարկված	11,107	36	4,300	-	48,737	64,180
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա, վերահաշվարկված	4,591	1,926	3,685	-	478	10,680
Օտարումներ	(635)	-	(2,935)	-	-	(3,570)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ., վերահաշվարկված	15,063	1,962	5,050	-	49,215	71,290
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	15,063	1,962	5,050	-	49,215	71,290
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	6,538	1,926	6,084	2,772	815	18,135
Օտարումներ	-	-	(1,304)	-	-	(1,304)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	21,601	3,888	9,830	2,772	50,030	88,121
Հաշվեկշռային արժեք						
Առ 1 հունվարի 2015թ., վերահաշվարկված	10,193	19,220	3,100	-	3,549	36,062
Առ 31 դեկտեմբերի 2015թ., վերահաշվարկված	23,802	17,294	9,206	13,974	6,051	70,327
Առ 31 դեկտեմբերի 2016թ.	21,583	15,368	19,908	11,202	5,594	73,655

9 Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Պետական բյուջե վճարվելիք գումարներ	59,432	30,067
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	30,485	35,695
Առևտրական դեբիտորական պարտքեր	16,152	43,697
Ստացված կանխավճարներ	11,157	46,354
Շնորհներին վերաբերող վճարվելիք գումարներ	-	60,347
Այլ վճարվելիք գումարներ	-	1,690
Ընդամենը կրեդիտորական պարտքեր	117,226	217,850

Հիմնադրամի ենթարկվածությունն արտարժույթի և իրացվելիության ռիսկերին վճարվելիք գումարների հետ կապված ներկայացված են ծանոթագրություն 15-ում:

10 Եկամուտներին վերաբերող շնորհներ

հազ. դրամ	2016թ.	2015թ.
		վերահաշվարկված
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	619,028	88,396
Տարվա ընթացքում ստացված	1,632,921	1,450,161
Նվիրատվություններից ստացված եկամտի կազմում ճանաչված	(1,295,573)	(919,529)
Մնացորդը տարեվերջի դրությամբ	956,376	619,028

11 Ակտիվներին վերաբերող շնորհներ

հազ. դրամ	2016թ.	2015թ.
		վերահաշվարկված
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	75,717	106,734
Տարվա ընթացքում ստացված	19,594	267,267
Նվիրատվություններից ստացված եկամտի կազմում ճանաչված	(18,135)	(298,284)
Մնացորդը տարեվերջի դրությամբ	77,177	75,717

12 Եկամուտ նվիրատվություններից

հազ. դրամ	2016թ.	2015թ.
		Վերահաշվարկված
«Այբ» դպրոցի շինարարական աշխատանքների համար	458,100	359,310
Կառավարության ծրագիր իրականացնելու համար	424,835	383,276
Այլ նվիրատվություններից և շնորհներից	430,773	475,227
	1,313,708	1,217,813

13 Այլ ծախսեր

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Վարձակալության գծով ծախսեր	42,254	48,433
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	34,133	37,004
Կոմունալ ծառայությունների և գրասենյակային ծախսեր	16,376	13,065
Տրանսպորտային ծախսեր	7,517	3,481
Առդիտորական և խորհրդատվական ծառայություններ	3,436	10,201
Այլ ծառայություններ	15,562	42,239
	119,278	154,423

14 Ծախսահարկի գծով ծախս

(ա) Ծախսերում կամ վնասում ճանաչված գումարներ

Հիմնադրամը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառվող 20% դրույքով:

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	(634)
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(784)	7,032
Ընդամենը շահութահարկի գծով (ծախս)/հատուցում	(784)	6,398

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

հազ. դրամ	2016թ.	%	2015թ.	%
Շահույթ/(վնաս) մախքան շահութահարկով հարկումը	7,721		(27,190)	
Շահութահարկի գծով ծախս՝ կիրառելի հարկային դրույքով	(1,544)	(20)	5,438	20
Չհարկվող եկամուտ	760	10	960	4
	(784)	(10)	6,398	24

(բ) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում:

հազ. դրամ	1 հունվարի 2016թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2016թ.
Ոչ նյութական ակտիվներ	9,674	-	9,674
Առևտրական դեբիտորական պարտքեր	176	-	176
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8,160	220	8,380
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	7,100	(1,004)	6,096
	25,110	(784)	24,326

հազ. դրամ	1 հունվարի 2015թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2015թ.
Ոչ նյութական ակտիվներ	9,674	-	9,674
Առևտրական դեբիտորական պարտքեր	176	-	176
Ակտիվներին վերաբերող շնորհներ	4,134	4,026	8,160
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	4,094	3,006	7,100
	18,078	7,032	25,110

15 Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Հիմնադրամը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (ծանոթագրություն 15 (բ)),
- իրացվելիության ռիսկ (ծանոթագրություն 15 (գ)),
- շուկայական ռիսկ (ծանոթագրություն 15 (դ)):

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Հիմնադրամի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Հիմնադրամը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները կունեն հստակ սահմանված դերեր և պարտականություններ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Ֆինանսական ակտիվները, որոնք կարող են ենթարկվել պարտքային ռիսկի, հիմնականում հանդիսանում են բանկային հաշիվների մնացորդները: Թեև տնտեսական պայմանները կարող են ազդեցություն ունենալ բանկային հաշիվների մնացորդների հավաքագրման վրա, ղեկավարությունը գտնում է, որ պայմանագրային կողմերը կկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները, այդ իսկ պատճառով, Հիմնադրամը ենթարկված չէ էական պարտքային ռիսկի: Բանկային հաշիվների մնացորդները պահվում են խոշոր հայկական բանկերում, և Հիմնադրամը չի ակնկալում, որ վերջիններս չեն կատարի իրենց պարտականությունները:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածությունը առավելագույն չափը:

հազ. դրամ	2016թ.	2015թ.
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	193,993	344,682
Ավանդներ բանկերում	123,889	121,547
Ստացվելիք շնորհներ	14,470	99,403
Տրամադրված փոխառություններ	5,315	29,731
Ընդամենը ենթարկվածությունը առավելագույն չափը	337,667	595,363

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Հիմնադրամի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Հիմնադրամի համբավը վտանգելու:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Գումարները ներկայացված են համախառն հիմունքով և զեղչված չեն:

31 դեկտեմբերի 2016թ.

հազ. դրամ	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր						Ավելի քան 5 տարի
	Հաշվեկշռ. արժեք	Ընդամենը	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	16,152	16,152	16,152	-	-	-	-
Ստացված փոխառություններ	5,240	5,240	-	-	5,240	-	-
	21,392	21,392	16,152	-	5,240	-	-

31 դեկտեմբերի 2015թ.

հազ. դրամ	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր						Ավելի քան 5 տարի
	Հաշվեկշռ. արժեք	Ընդամենը	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	104,044	104,044	104,044	-	-	-	-
Ստացված փոխառություններ	36,860	36,860	-	-	31,621	5,239	-
	140,904	140,904	104,044	-	31,621	5,239	-

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

(ե) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Հիմնադրամի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում՝ արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ

Հիմնադրամը ենթարկվում է արտարժույթի ռիսկին այնքանով, որքանով արատարժույթները, որոնցով արտահայտված են ավանդները, շնորհները և այլ ստացվելիք գումարները և փոխառությունները, չեն համապատասխանում Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթին: Այս գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Ստորև ներկայացված է Հիմնադրամի ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին:

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով արտահայտված 2016թ.	ԱՄՆ դոլարով արտահայտված 2015թ.
Ավանդներ բանկերում	123,889	118,288
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	86,241	305,819
Շնորհները և այլ ստացվելիք գումարներ	19,067	103,999
Ստացված փոխառություններ	(3,513)	(35,133)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	(180)
	225,684	492,793

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները՝

ՀՀ դրամով	Միջին փոխարժեք		Միջին փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2016թ.	2015թ.	2016թ.	2015թ.
1 ԱՄՆ դոլար	480.48	477.95	483.94	483.75

Զգալունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի խելամտորեն հնարավոր արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծության ժամանակ ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

հազ. դրամ	Արժևորում	Արժեզրկում
	Շահույթ կամ վնաս	Շահույթ կամ վնաս
31 դեկտեմբերի 2016թ.		
ԱՄՆ դոլար (10% շարժ)	(22,568)	22,568
31 դեկտեմբերի 2015թ.		
ԱՄՆ դոլար (10% շարժ)	(49,279)	49,279

16 Կապիտալ պարտավորվածություններ

Հիմնադրամն ունի շինարարական աշխատանքների պայմանագրերին վերաբերող 323,616 հազար դրամ գումարով (2015թ-ին՝ 800,215 հազար դրամ) կապիտալ ծախսումներ կատարելու պարտավորվածություն:

17 Կապիտալի կառավարում

Հաշվի առնելով Հիմնադրամի գործունեության բնույթը՝ այն չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն: Հիմնադրամի կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների կողմից սահմանված պահանջներ:

18 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(i) Ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է աշխատակազմի գծով ծախսերի կազմում:

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	113,655	95,030

(ii) Այլ գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

հազ. դրամ	Գործարքի արժեքը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2016թ.	2015թ.	2016թ.	2015թ.
Ստացված ծառայություններ	-	(3,600)	-	(302)
Եկամուտներին վերաբերող շնորհներ	715	1,494	-	-
Տրամադրված փոխառություն	-	-	-	(24,735)

Կապակցված կողմին տրամադրված փոխառությունը, որի մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 24,735 հազար դրամ, տոկոսակիր չէր և ենթակա էր մարման 2016թ-ին:

(iii) Գործարքներ Հոգաբարձուների խորհրդի և հիմնադիրների հետ

հազ. դրամ	Գործարքի արժեքը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2016թ.	2015թ.	2016թ.	2015թ.
Եկամուտներին վերաբերող շնորհներ	185,893	134,802	496,199	352,566
Շնորհի փոխարկված ստացված փոխառություն	30,042	-	2,614	32,965

Կապակցված կողմից ստացված փոխառությունը, որի մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 32,965 հազար դրամ, տոկոսակիր չէր և ենթակա էր մարման 2016թ-ին:

(iv) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

հազ. դրամ	Գործարքի արժեքը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2016թ.	2015թ.	2016թ.	2015թ.
Եկամուտներին վերաբերող շնորհներ (ստացված)	728	-	728	-
Տրամադրված շնորհ	(565,528)	(497,926)	-	(60,347)
Ստացված ծառայություններ	-	(75)	-	-
Տրամադրված փոխառություններ	-	20,000	-	-
Չեղբրեղված ապրանքներ և ծառայություններ	(42,732)	(43,928)	-	(1,138)

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները պետք է մարվեն կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ: Հաշվետու կամ նախորդ տարում չեն ճանաչվել անհուսալի կամ կասկածելի պարտքերի գծով ծախսեր՝ կապակցված կողմերի պարտքերի հետ կապված:

Այլ կապակցված կողմերն իրենցից ներկայացնում են Հիմնադրամի հետ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները և Հիմնադրամի կողմից հիմնադրված այլ հիմնադրամները:

19 Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

20 Անճշտությունների ուղղում

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը կատարել է որոշ համադրելի տվյալների վերահաշվարկ՝ ստորև ներկայացված անճշտություններն ուղղելու նպատակով:

2010թ-ին «Այբ» կրթական հիմնադրամի («Հիմնադրամ») և «ՎԵՄ Չերիթի» հիմնադրամի միջև կնքվել էր փոխադարձ պայմանագիր, համաձայն որի կողմերը համաձայնվել էին ստեղծել նոր իրավաբանական անձ՝ հիմնադրամի տեսքով և իրականացնել «Այբ կրթական հանգույց» ծրագիրը: Այս ծրագրի շրջանակներում Հիմնադրամը պետք է իրականացներ շինարարական աշխատանքները, իսկ «ՎԵՄ Չերիթի» հիմնադրամը՝ տրամադրեր հողատարածքը: Ըստ նախնական համաձայնության՝ նոր հիմնադրամի («Այբ կրթական հանգույց») ստեղծումից հետո ողջամիտ ժամկետում պայմանագրի շրջանակներում ստեղծված ակտիվները պետք է փոխանցվեին նոր հիմնադրամին: «Այբ կրթական հանգույց» հիմնադրամը հիմնադրվել է 2011թ. հունիսին:

2011-2016թթ. ընկած ժամանակաշրջանում Հիմնադրամն իրականացրել է «Այբ կրթական հանգույց» ծրագրի շենքերի շինարարական աշխատանքները, որոնք գտնվում են «ՎԵՄ Չերիթի» հիմնադրամի կողմից տրամադրված հողատարածքում: Հողտարածքը և դրա վրա կառուցված շենքերը սեփականության իրավունքով պատկանում են «ՎԵՄ Չերիթի» հիմնադրամին: Շենքերն օգտագործվում են «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի կողմից: Շինարարական աշխատանքների ֆինանսավորումը Հիմնադրամը ճանաչել է որպես անավարտ շինարարություն, իսկ շինարարության ֆինանսավորման համար նվիրատուներից ստացված միջոցները՝ որպես ակտիվներին վերաբերող շնորհներ: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անավարտ շինարարության հաշվեկշռային արժեքը և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված համապատասխան շնորհները կազմել են 1,645,969 հազար դրամ (1 հունվարի 2015թ.՝ 1,293,282 հազար դրամ):

2011-2016թթ. ընկած ժամանակաշրջանում Հիմնադրամը գնել է որոշ ակտիվներ ստացված շնորհների հաշվին և փոխանցել է «Այբ կրթական հանգույց» հիմնադրամին՝ յոթ տարի շնորհների հաշվին և փոխանցել է «Այբ կրթական հանգույցի շրջանակներում: Փոխանցումից հետո ժամկետով անհատույց օգտագործման պայմանագրի շրջանակներում: Հիմնադրամը շարունակել է ճանաչել այս ակտիվները և ակտիվներին վերաբերող շնորհները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ակտիվների հաշվեկշռային արժեքը և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված համապատասխան շնորհները կազմել են 234,075 հազար դրամ (1 հունվարի 2015թ.՝ 179,641 հազար դրամ):

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը վերահաշվարկել է համապատասխան տվյալներն՝ անավարտ շինարարության, այլ ակտիվների և համապատասխան շնորհների ընդհանուր մնացորդը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից դուրս բերելու համար:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

հազ. դրամ	Անճշտության ուղղման ազդեցությունը		
	Նախկինում ներկայացված գումարներ	Վերահաշվարկ	Վերահաշվարկված գումար
1 հունվարի 2015թ.			
Ընդամենը ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	1,508,985	(1,472,923)	36,062
Ընդամենը պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	1,579,657	(1,472,923)	106,734

հազ. դրամ	Անճշտության ուղղման ազդեցությունը		
	Նախկինում ներկայացված գումարներ	Վերահաշվարկ	Վերահաշվարկված գումար
31 դեկտեմբերի 2015թ.			
Ընդամենը ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	1,903,608	(1,833,281)	70,327
Ընդամենը պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	1,790,806	(1,715,089)	75,717
Եկամուտներին վերաբերող շնորհներ	737,220	(118,192)	619,028

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

հազ. դրամ	Անճշտության ուղղման ազդեցությունը		
	Նախկինում ներկայացված գումարներ	Վերահաշվարկ	Վերահաշվարկված գումար
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար			
Եկամուտ նվիրատվություններից	857,455	360,358	1,217,813
Տրամադրված նվիրատվություններ և շնորհներ	(212,334)	(407,122)	(619,456)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախս	(57,444)	46,764	(10,680)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	(20,792)	-	(20,792)

21 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հիմնադրամն այս ֆինանսական հաշվետվություններում կիրառել է իր 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում կիրառված նույն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ՀՀ դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(բ) Ֆինանսական գործիքներ

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամը ստացվելիք գումարները սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Հիմնադրամը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Հիմնադրամի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Հիմնադրամն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Հիմնադրամը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասին: Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ համաձայն արժեզրկումը (ծանոթագրություն 3 (ե) (i)):

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասը ներառում է ֆինանսական ակտիվների հետևյալ դասերը՝ ստացվելիք գումարները, դրամական միջոցները և դրանց համարժեքները (ծանոթագրություն 4) և տրամադրված փոխառությունները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցների մնացորդները և ընթացիկ բանկային հաշիվները:

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասում է այլ ֆինանսական պարտավորությունների դասին: Նման ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վճարվելիք գումարները:

(գ) Հիմնական միջոցներ

(i) Ծանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են գուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Հիմնադրամ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները զնահատվում են, և եթե տվյալ բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած բաղկացուցիչների օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում:

Հիմնական միջոցների բոլոր միավորների մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր բաղկացուցիչի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների էական միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար.

• համակարգիչներ և սարքավորումներ	5-10 տարի
• փոխադրամիջոցներ	5-10 տարի
• տնտեսական գույք	3-5 տարի
• վարձակալված հիմնական միջոցների բարելավում	1-10 տարի
• ոչ նյութական ակտիվներ	5 տարի
• այլ ակտիվներ	1-10 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(դ) Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(ե) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Հիմնադրամի վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Հիմնադրամն այլ հանգամանքներում չէր դիտարկի, պարտապանի սնանկացման հայտանիշները, փոխառումների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները կամ տնտեսական պայմանները, որոնք կապված են պարտականությունների չկատարման հետ:

Հիմնադրամը ստացվելիք գումարներն դիտարկում է արժեզրկման վկայության անհատական և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ստացվելիք գումարները գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի ստացվելիք գումարների արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Ստացվելիք գումարները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ստացվելիք գումարները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Հիմնադրամը դիտարկում է պարտականությունների չկատարման ճանաչման առկա միտումները, մարումների ժամկետները և կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի ճանաչման առկա միտումներով առաջարկվողներից:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի (առանց հետաձգված հասույթի) և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում: Եթե Հիմնադրամը գտնում է, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Հիմնադրամը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները զեղչի ծախսագրման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամի ոչ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս գնահատված փոխհատուցվող գումարը:

Ակտիվի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(գ) Ընդհանուր և եկամուտ նվիրատվություններից

Եկամուտներին և ակտիվներին վերաբերող շնորհների սկզբնական ճանաչումն իրականացվում է իրական արժեքով, երբ կա հիմնավոր հավաստիացում, որ շնորհը կստացվի և Հիմնադրամը բավարարելու է շնորհի հետ կապված պայմանները: Ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սխտեմատիկ հիմունքով ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Եկամուտներին վերաբերող շնորհները, որոնք փոխհատուցում են Հիմնադրամի կրած ծախսերը, ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես նվիրատվություններից ստացվող եկամուտ սխտեմատիկ հիմունքով այն նույն ժամանակաշրջաններում, երբ ծախսերը ճանաչվում են:

(ե) Ծախսեր

Ընդհանրի տրամադրմանը վերաբերող ծրագրային ծախսերը ճանաչվում են Հիմնադրամի և շնորհը ստացող կողմի միջև շնորհի նամակը ստորագրելու ժամանակ: Եթե շնորհները տրամադրվում են որոշակի պայմաններով, շնորհի գծով ծախսերը գրանցվում են այն պահին, երբ շնորհը ստացող կողմը կատարում է պահանջները կամ երբ քիչ հավանական է դառնում շնորհը ստացող կողմի կողմից պայմանները չբավարարելու հնարավորությունը:

Այլ ծրագրային ծախսերը և շնորհներին չվերաբերող ծախսերը ճանաչվում են հաշվեզրման հիմունքով՝ ապրանքները ստանալու կամ ծառայությունները մատուցելու պահին:

Ծրագրային և վարչական ծախսերին վերաբերող ծախսերի բաշխումն իրականացվում է ելնելով համապատասխան ծախսի բնույթից և հաշվի առնելով ծախսած ժամանակի ղեկավարության լավագույն գնահատականը և ծրագրին առնչվող և չառնչվող գործունեության գծով կրած համապատասխան ծախսերը:

Ղեկավարության գնահատականի համաձայն՝ ծախսած ժամանակը և ծրագրին առնչվող և չառնչվող գործունեության գծով կրած համապատասխան ծախսերը միջինում կազմում են վարչական ծախսերի համաատասխանաբար 91% և 9% (2015թ-ին 90% և 10%):

(ը) Հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների: Հարկերն ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ հարկեր, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի Հանրապետության գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

(թ) Վարձակալություն

(i) Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում

Համաձայնության սկզբում Հիմնադրամը որոշում է, թե արդյոք այն հանդիսանում է վարձակալություն կամ պարունակում է վարձակալություն: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք համաձայնության կատարումը կախված է որոշակի ակտիվի կամ ակտիվի օգտագործումից և արդյոք համաձայնությունը փոխանցում է ակտիվի օգտագործման իրավունքը:

Համաձայնության սկզբին կամ համաձայնության գնահատման վերանայման պահին Հիմնադրամը տարանջատում է համաձայնությամբ պահանջվող վճարները և այլ հատուցումները վարձակալության և այլ տարրերից՝ դրանց հարաբերական իրական արժեքների հիման վրա: Եթե Հիմնադրամը եզրակացնում է, որ ֆինանսական վարձակալության դեպքում վճարների հուսալի տարանջատումը գործնականում անհնար է, ակտիվը և պարտավորությունը ճանաչվում են վարձակալության առարկայի հիմքում ընկած ակտիվի իրական արժեքին հավասար արժեքով: Հետևաբար, պարտավորությունը նվազեցվում է վճարումների կատարմանը գույքընթաց, և պարտավորության գծով հաշվարկվող ենթադրվող ֆինանսական ծախսը ճանաչվում է՝ կիրառելով Հիմնադրամի փոխառության հավելյալ տոկոսադրույքը:

(ii) Վարձավճարներ

Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվեն են որպես ծախս գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալություն գծով ստացված խրախուսող պայմանները ճանաչվում են որպես ընդհանուր վարձակալության ծախսի բաղկացուցիչ մաս՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

22 Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ գործում են 2016թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Հիմնադրամի գործունեության վրա: Հիմնադրամը մտադիր է կիրառել այդ ստանդարտները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

(ա) ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ը սահմանում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել վարձակալության համար: Այս մոդելի համաձայն՝ վարձակալը պետք է ճանաչի օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվը, որն իրենից ներկայացնում է ելակետային ակտիվն օգտագործելու իրավունք, և վարձակալության գծով պարտավորությունը, որն իրենից ներկայացնում է վարձավճարների վճարման պարտականություն: Նախատեսված են կամայական բացառություններ կարճաժամկետ վարձակալության և ցածր արժեք ունեցող միավորների վարձակալության համար: Վարձատուների համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, նրանք շարունակում են դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի:

ՖՀՄՍ 16-ը փոխարինում է ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», ՖՀՄՄԿ մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ մեկնաբանություն 15 «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ մեկնաբանություն 27 «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը» սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները:

ՖՀՄՍ 16-ը կգործի 2019թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ՝ նաև ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ» ստանդարտը ՖՀՄՍ 16-ի կիրառման ամսաթվից կամ դրանից առաջ կիրառելու պայմանով:

Հիմնադրամը դեռ չի գնահատել նոր ստանդարտի հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

(բ) ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից ստացվող հասույթ»

ՖՀՄՍ 15 ստանդարտը սահմանում է համապարփակ հիմունքներ, որոշելու համար, թե որ հանգամանքներում, ինչ չափով և երբ պետք է ճանաչվի հասույթը: Ստանդարտը փոխարինում է հասույթի ճանաչման ներկայումս գործող ուղեցույցները, ներառյալ՝ ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր» և ՖՀՄՄԿ մեկնաբանություն 13 «Հաճախորդի հավատարմության ծրագրեր» ուղեցույցները:

ՖՀՄՍ 15 կգործի 2018թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ:

Հիմնադրամը դեռ չի գնահատել նոր ստանդարտի հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա: